ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՄԱՅԻՍԻ 9-Ի ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ, Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի թանկագի՛ն վետերաններ, Հայոց բանակի հարգարժա՛ն գեներալներ, սպաներ և զինվորներ, ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Մայիսի 9-ի՝ Հաղթանակի ու խաղաղության տոնի կապակցությամբ: Այսօր առավել քան երբևէ մեզ մեծ ուժ, միասնականություն և համախմբվածություն է հարկավոր, որպեսզի ունենանք էլ ավելի ուժեղ երկիր, ամրագրենք անխախտ խաղաղություն և յուրաքանչյուրս մեր տեղում, մեր աշխատանքով շենացնենք և զարգացնենք մեր սիրելի երկիրը: Մեր ուժն ու եռանդը նվիրենք ստեղծագործելու, նորը արարելու և միմիայն Հայաստանի հանրապետությունը հզորացնելու գործին:

Սիրելի՛ հայրենակիցներ, օրվա առթիվ առանձնակի ուզում եմ շնորհավորել Հայրենական պատերազմի վետերաններին, Արցախյան ազատամարտի մեր նորօրյա հերոսներին, հայոց բանակի զինվորներին և սպաներին և իմ խոնարհվումը բերել հայրենիքի պաշտպանության սրբազան գործում իրենց կյանքը չխնայած մեր բոլոր քաջորդիների հիշատակի առաջ: Նրանց հիշատակը, մեզ նաև պարտավորեցնում է արժանիորեն շարունակելու Հայոց անկախ պետականության ամրապնդման հայրենանվեր գործը՝ նոր հաղթանակներ տանելով տնտեսության մեջ, հզորացնելով մեր պետությունն ու բանակը:

Հավերժ փառք մեր հերոսներին, խաղաղություն մեր հայրենիքին, լավատեսություն և ստեղծարար աշխատանք բոլորիս..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ